# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 8)**

28 հունիսի 2013թ. — ժամը 15:00

1. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում» ծրագրի մասին:
(Գագիկ Պողոսյան)

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում» ծրագրի մասին:
(Արման Գրիգորյան)

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարան-սրճարանի հիմնում» ծրագրի մասին:
(Կարեն Ազատյան)

4. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ամառային ճամբար Շիրակի մարզի Գյումրի քաղաքի, Մարմաշեն և Հովունի գյուղերի 600 երեխաների համար» ծրագրի մասին:
(Սերգեյ Արզումանյան)

5. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկևան համայնքի խմելու ջրի ջրամբարի և Այգեհովիտ համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում» ծրագրի մասին:
(Ռոբերտ Հակոբյան)

6. «Քաղցկեղով երեխաների բարեկամներ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն մանկական քաղցկեղի դեմ պայքարին» ծրագրի մասին:
(Գրիգոր Բադալյան)

## 7. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

7.1 «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.2 Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:



7.3 «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.4 «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին:

7.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

7.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 1-ի N Մ-917-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

7.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-093-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե):

7.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամաբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության Հայաստանյան մասնաճյուղ (N2):

7.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ):

7.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի N Մ-259-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առողջ կյանքի ուղի»):

## 8. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 4 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 5 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

8.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին N 1 («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

8.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-420-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ):

8.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-467-Ա և 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-308-Ա որոշումներով հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

8.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-355-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայստանյան մասնաճյուղ):

8.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-356-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայստանյան մասնաճյուղ):

8.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 29-ի N Մ-195-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սեյվ դը չիլդրեն ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն):

8.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկների հիմադրամ):

8.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-303-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ):

8.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի հարակից գործարքի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ(N1):



**9. Այլ հարցեր**

9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին («Սի.Օ.Էյ.Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամ):

9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-431-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սեյվ դը չիլդրեն ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն):

9.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-409-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպություն):

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ar. 8/1

**հունիսի 2013 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆՈՐ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/ -13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 02/ -13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հունիսի -ի N -13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի -ի N ՎՄ/3-4/ -13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունիսի -ի N 01/12.1/ -13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 4,230,031 դրամ ընդհանուր արժողությամբ «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2013 թվականի հունիսի 3-ին կնքված N WVA/TAL ADP/HT-13/001/FY13 (2013 թվականի հունիսի 17-ին կնքված N WVA/TAL ADP/HT-13/001/FY13-01 համաձայնագրի խմբագրությամբ) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում՝ 4,230,031 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

Ar. 8/1

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն՝ Գրիգորի Սթրոնգ

18 հունիսի, 2013թ.

«Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի դպրոց:<br>Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 4,230,031 (չորս միլիոն երկու հարյուր երեսուն հազար երեսունմեկ) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013թ.-ի հունիսի 3-ից -2013թ-ի հուլիսի 31-ը |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2013թ. հունիսի 3-ից մինչև 2013թ.-ի հուլիսի 31-ը ժամանակահատվածում իրականացնել Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքներ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Բարսիս» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 4,230,031 (չորս միլիոն երկու հարյուր երեսուն հազար երեսունմեկ) ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի դպրոցի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Թալինի տարածքային զարգացման ծրագրի գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Կանադայի գրասենյակի կողմից:<br><<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Շաղիկ Մարու[illegible]
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության [illegible] մասնաճյուղի գործառնությունների ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Հ. 8/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

25.06.2013թ. № 3/3.8-1/8388-13

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.06.13թ. N 15/15.1/8895-13 գրության՝ կապված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատ. Ն. Հարությունյան հեռ.595-229

034/16837-13
25.06.2013թ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Հ. 8/1

№ 02/3703-13
26.06.2013թ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 21-ի 15/15.1/8895-13 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227

035/17041-13
26.06.2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

ԱՐ-8/1

N 03/07-1/6881-13 24.06 2013

*ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հունիսի 21-ի №15/15.1/8895-13 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Մ.ՄԿՐՏՉՅԱՆ**

*կատ. Ն.Սահակյան
հեռ. 524777*

031/16678-13
24.06.2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

ԱՐ-8/1

N: ՂՄ/3-4/7562-13
25.06.2013թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.06.2013թ. թիվ 15/15.1/8895-13 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

044/16803-13
25.06.2013թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ար-8/1

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am


26.06.2013թ. N 01/14.2/1904-13

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ձեր 21.06.13թ. թիվ 15/15.1/8895-13 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրն առաջարկում ենք որակել բարեգործական:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

Կատարող՝ Ա.Դավթյան
Հեռ.՝ 0232-3-37-74

110/16348-13
26.06.2013թ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**հունիսի 2013 թվականի N Մ - -Ա**

Ար-8/2

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/ -13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 02/ -13, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի հունիսի -ի N -13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի -ի N ՎՄ/3-4/ -13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունիսի -ի N 01/12.1/ -13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,326,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմ Պլաստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02572315) 2013 թվականի հունիսի 6-ին կնքված N WVA/Order=1(FY13) (2013 թվականի հունիսի 11-ին կնքված N WVA/Order=1(FY13) համաձայնագրով ժամկետը երկարացվել է) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խողովակների մատակարարում՝ 1,326,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

16952

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Միհրան Առաքելյան
25 հունիսի, 2013թ.

«Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բարելավել Ապարանի տարածաշրջանի Շողակն, Ձորագլուխ, Քուչակ և Չքնաղ համայնքների բնակչությանը խմելու ջրի մատակարարումը՝ ջրագծերի մասնակի վերանորոգման միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող զրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արագածոտնի մարզի Շողակն, Ձորագլուխ, Քուչակ և Չքնաղ համայնքներ:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,326,000 (մեկ միլիոն երեք հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Արագածոտնի մարզի Շողակ, Ձորագլուխ, Քուչակ, Չքնաղ համայնքներ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Հունիսի 6 – հուլիսի 16, 2013թ. |

<table>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2013 թվականի հունիսի 6-ից մինչև հուլիսի 16-ը Արագածոտնի մարզի Շողակ, Զորագյուխ, Քուչակ, Չքնաղ համայնքների համար մատակարարել պոլիէթիլենային խողովակներ և դրանց կցամասեր ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,326,000 դրամ:</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>
<table>
<tr><td></td><td>Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը</td><td>Ձեռք բերվող ծավալները</td><td>Նախատեսվող գինը /դրամ/</td></tr>
<tr><td>1.</td><td>Շինանյութի մատակարարում՝ Պոլիէթիլենային խողովակներ PN10 , 50մմ և հարակից մասեր Շողակի համայնքի խմելու ջրագծերի վերանորոգման համար:</td><td>300 գ/մ</td><td>156,000</td></tr>
<tr><td>2.</td><td>Շինանյութի մատակարարում՝ Պոլիէթիլենային խողովակներ PN10 , 50մմ և հարակից մասեր Զորագյուխ համայնքի խմելու ջրագծերի վերանորոգման համար:</td><td>600 գ/մ</td><td>312,000</td></tr>
<tr><td>3.</td><td>Շինանյութի մատակարարում՝ Պոլիէթիլենային խողովակներ PN10 , 50մմ և հարակից մասեր Քուչակ համայնքի խմելու ջրագծերի վերանորոգման համար:</td><td>200 գ/մ</td><td>234,000</td></tr>
<tr><td></td><td>Շինանյութի մատակարարում՝ Պոլիէթիլենային խողովակներ PN10 , 75մմ և հարակից մասեր Քուչակ համայնքի խմելու ջրագծերի վերանորոգման համար:</td><td>200 գ/մ</td><td>104,000</td></tr>
<tr><td>4.</td><td>Շինանյութի մատակարարում՝ Պոլիէթիլենային խողովակներ PN10, 50մմ և հարակից մասեր Չքնաղ համայնքի խմելու ջրագծերի վերանորոգման համար:</td><td>1,000 գ/մ</td><td>520,000</td></tr>
<tr><td></td><td>Ընդամենը:</td><td></td><td>1,326,000</td></tr>
</table>
Ծրագիրն իրականացնելու համար Վորլդ Վիժն Հայաստանը պայմանագիր է կնքել «Արմ Պլաստ» Փակ Բաժնետիրական Ընկերության հետ, որը կիրականացնի ջրագծերի համար պոլիէթիլենային խողովակների և դրանց կցամասերի մատակարարումը ծրագրի համայնքներ: Պայմանագիրը և նրա հավելվածները կցվում են:</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների՝ հետ համատեղ:<br>Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Շողակ, Զորագյուխ, Քուչակ, Չքնաղ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի Ապարանի տարածքային զարգացման ծրագրի գրասենյակի, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի կողմից:<br><<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</td></tr>
</table>

Շաղիկ Մարուխյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Ն. 8/2

Ն. 8/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ԱԻ · Ց/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.06.13 № 3/38-1/8734-13

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 18.06.13թ. N 15/15.1/8682-13 գրության՝ կապված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/16429-13

Կատ. Ն. Հարությունյան հեռ.595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** ԱԻ · Ց/2

N 02/3570-13
21.06.2013թ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 18-ի**
**15/15.1/8682-13 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում» ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել ծրագրի իրականացման տևողությունը՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,**
**Մ. Սահակյան, հեռ. 380-227**

035/16468-13
21.06.2013թ

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

դր - 8/2

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

"26" հունիսի 2013 թ.

N. 07/07.1/3391-13

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր՝ 18.06.2013թվականի 15/15.1/8682-13 գրության «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան :

Հարգանքով՝

Ա. ԲԱԽՇՅԱՆ

025/16344-13
26.06.2013թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

դր - 8/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

N: ՍՎ/3-4/7488-13
24.06.2013թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 18.06.2013թ. թիվ 15/15.4/8682-13 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

044/16605-13
24.06.2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

20.06.13 N 01/14.1/1848-13

ՀՀ կառավարության աշխատակազմի 2013-06-19թ.
թիվ 15/15.1/8682-13 գրության

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր Սիմոնյանին**

<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճուղի միջոցներով <<Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծի վերանորոգում>> ծրագիրը բարեգործական որակելու և ծրագիրը իրականացնող << Արմ Պլաստ>>ՓԲԸ-ին ՀՀ օրենսդրությամբ հարկային արտոնություններ տալուն չենք առարկում:

**Ս. Սահակյան**

110/16344-13

Կատարող՝ Ա. Դավթյան
Հեռ. 0232 3-37-34

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել ծրագրի իրականացման տևողությունը: | Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: |

դր. 8/2

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**հունիսի 2013 թվականի N Մ - -Ա** Մ- 8/3

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՐԴԿԱՆՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱ-ԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ՍՐՃԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/ -13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 02/ -13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի -ի N ՎՄ/3-4/ -13 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի հունիսի -ի N 01/15/ -13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 6,847,716 դրամ ընդհանուր արժողությամբ «Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարան-սրճարանի հիմնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԲՆՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07613114) 2013 թվականի հունիսի 6-ին կնքված N WVA/VAR ADP/CW-13/002/FY-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 6,847,716 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

Մ- 8/3

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

955

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային<br>բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի<br>տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Միրա Առաքելյանի կողմից<br>25 հունիսի, 2013թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա» հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարան-սրճարանի հիմնում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի "Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա " հասարակական կազմակերպությանը՝ մանկական գրադարան-սրճարան հիմնելու գործում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Ֆրանսիայի աջակցող գրասենյակ,<br>հասցե՝ Վիժն Դու Մոնդ, 7 ռուե Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա,<br>հեռախոս՝ +01 49 49 11 12 |
| 4. | Ծրագիրը կատարողը | "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1 , ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք<br>Բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6,847,716 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի "Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա " հասարակական կազմակերպությունը և նրա ծրագրերին մասնակցող երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Հուլիսի 6 2013 – օգոստոսի 20 2013 թթ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see table below) |

| Միջոցառումների նկարագրությունը | Ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| Կապալառու կազմակերպության հետ պայմանագրերի կնքում՝ | Հունիսի 6, 2013թ. | չի պահանջվում |
| Տարածքի վերանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում | Հունիսի 6– օգոստոսի 20, 2013 թ. | 6,847,716 դրամ |

Ստ. 8/3

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի "Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա " հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարան-սրճարան հիմնման աշխատանքները իրականացնելու է բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «ԲՆՎ» ՍՊԸ կազմակերպության կողմից:<br>ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի "Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա " հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարան-սրճարան հիմնելու վերանորոգման աշխատանքների համար նախատեսված է 6,847,716 դրամ:<br>Աշխատանքների մանրամասն նկարագիրը, ծավալները և գինը ներկայացված են ծրագրին կից ներկայացվող "ԲՆՎ" ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի նախահաշվի և տեխնիկական մասնագրերի մեջ:<br>Ստորև ներկայացված են վերանորոգման շախատանքների համառոտ նկարագիրը և արժեքները: |

| Ծառայությունների նկարագրությունը | Անհրաժեշտ ֆինանս. միջոցներ /դրամ/ |
|---|---|
| 1. Քանդման աշխատանքներ<br>2. Պատերի և միջնորմների վերանորոգում և կառուցում<br>3. Հարդարման աշխատանքներ<br>4. Կախովի առաստաղների մոնտաժում<br>5. Դռների և պատուհանների ապամոնտաժում և տեղադրում<br>6. Ջրագծերի և կոյուղու ներքին տեղամասի վերանորոգում<br>7. Էլեկտրական լուսավորություն | |
| Աշխատանքների ընդհանուր արժեքը՝ | 6,847,716 դրամ |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի հետ համագործակցությամբ:<br>Վորլդ Վիժն Հայաստանը և Վարդենիս քաղաքի "Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա " հասարակական կազմակերպության տնօրենը կկատարեն վերանորոգման ընթացքի կանոնավոր մոնիտորինգ: Վորլդ Վիժն Հայաստանը |

Ստ. 8/3

| | | |
|---|---|---|
| | | "Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա " հասարակական կազմակերպության տնօրենի հետ կկնքի համաձայնագիր երեխաների համար միջոցառումների ու ծրագրերի իրականացման, ինչպես նաև վերանորոգված տարածքի նպատակային շահագործման և պահպանման մասին: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերը ներկայացվող ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացվի Վորլդ Վիժն Հայաստանի Վարդենիսի Տարածքային Զարգացման ծրագրի և Ազգային Գրասենյակի շինարարության գծով պատասխանատու աշխատողների կողմից: Ծրագրի ընթացքը կներկայացվի Վարդենիսի Տարածքային Զարգացման Ծրագրի հաշվետվություններում:<br>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Շաղիկ Մարուխյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

ARMENIAN DIVISION 02528755

Ա. 8/3

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա. 8/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.06.2013թ. №3/3.8-1/8737-13

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 18.06.13թ. N 15/15.1/8622-13 գրության՝ կապված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդունելի չէ ծրագրի սկզբնաժամկետը ետին ամսաթվով ներկայացնելը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/16431-13
21.06.2013թ

կատ. Ն. Հարությունյան հեռ.595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա-8/3

N 02/3587-13
21.06.2013թ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 18-ի
15/15.1/8622-13 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարան-սրճարանի հիմնում» ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել ծրագրի իրականացման տևողությունը՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

Հարգանքով՝ Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Մ. Սահակյան, հեռ. 380-227

035/16432-13
21.06.2013թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Ա-8/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

N ԿՄ/3-4/7487-13
24.06.2013թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 18.06.2013թ. թիվ 15/15.1/8622-13 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարան-սրճարանի հիմնում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

044/16607-13
24.06.2013թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադրան-սրճարանի հիմնում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - ընդունելի չէ ծրագրի սկզբնաժամկետը ետին թվով ներկայացնելը: | Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: |
| ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել ծրագրի իրականացման տևողությունը: | Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: |

Լր. 8/3

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունիսի 2013 թվականի N Մ-          -Ա          Լր. 8/4
քաղ. Երևան

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ, ՄԱՐՄԱՇԵՆ ԵՎ ՀՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ 600 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/ -13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 02/ -13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հունիսի -ի N 02/ -13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի -ի N ՎՄ/3-4/ -13 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի հունիսի -ի N 01/ -13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 30,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ամառային ճամբար Շիրակի մարզի Գյումրի քաղաքի, Մարմաշեն և Հովունի գյուղերի 600 երեխաների համար» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Գրահամ Սթրոնգի կողմից «18» հունիսի, 2013թ

## «Ամառային ճամբար Շիրակի մարզի Գյումրի քաղաքի, Մարմաշեն և Հովունի գյուղերի 600 երեխաների համար»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Շիրակի մարզի Գյումրի քաղաքի (Անի, Մուշ-2, Ջրառ, Ավստրիական թաղամասեր) և Մարմաշեն ու Հովունի գյուղերի 9-11 տարեկան երեխաներին ֆիզիկական և մշակութային հանգստի ապահովում ամառային ճամբարում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Վորլդ Վիժն ԱՄՆ գրասենյակ, հասցե՝ 34834 Վեերհուզեր Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝: 1-888-511-6548 |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրը կատարում է Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755): |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մարմաշեն և Հովունի գյուղեր: Բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30,000,000 /երեսուն միլիոն/ դրամ |
